

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Փոխաստվության գործիք

Դատաիրավական բարեփոխումների 2-րդ ծրագիրը (ԴԲԾ2) ֆինանսավորվելու է Հատուկ Ներդրումային Վարկի միջոցով՝ որի ընդհանուր գումարը կազմում է xx միլիոն ՓՀԻ (22.5 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք)՝ ծրագրի իրականացման չորս (4) տարի տևողությամբ: Ծրագիրը դասակարգվել է կրկնվող ծրագիր: Ծրագրի ընդհանուր արժողությունը գնահատվել է 36 միլիոն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 8 միլիոն ԱՄՆ դոլար ներդրում և Ճապոնիայի Քաղաքականության և Մարդկային Ռեսուրսների Չարգացման Հիմնադրամի 3 միլիոն ԱՄՆ դոլար համաֆինանսավորման դրամաշնորհ, որն օգտագործվելու է ծրագրի տեխնիկական օժանդակության ու վերապատրաստման կարիքները մասնակի ֆինանսավորելու նպատակով: Քննարկվել է Նիդերլանդների Կառավարության կողմից խնամառու հիմնադրամի միջոցով լրացուցիչ համաֆինանսավորման հնարավորությունը, սակայն այն վերջնականապես կհստակեցվի Բանկի Տնօրենների խորհրդի կողմից ծրագիրը քննարկելուց հետո:

2. Ծրագրի զարգացման նպատակը և հիմնական չափորոշիչներ

ԴԲԾ2-ի զարգացման հիմնական նպատակներն են. (1) Հայաստանի դատաիրավական համակարգին ապահովել դատական գործառնությունների և ծառայությունների արդյունավետությունը, արժանահավատությունը և թափանցիկությունը բարելավելու համար անհրաժեշտ վարչարարություն, շինություններ և ընդլայնված կարողություններ, (2) շարունակել դատական ծառայությունների մասին իրազեկվածության և իրավական ու դատական տեղեկությունների մատչելիության բարելավումը: ԴԲԾ2-ը կաջակցի Հայաստանի դատաիրավական համակարգին իրականացնել դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլը, որին սկիզբ է դրվել Սահմանադրական փոփոխությունների ընդունմամբ և Դատական նոր օրենսգրքի ներկայացմամբ:

Ծրագրի Չարգացման նպատակների ձեռքբերումը գնահատվելու է կատարողականի չափորոշիչներով, ներառյալ՝ Կառավարության և դատաիրավական համակարգի գործառնական վիճակագրությունը, որը լրացվում է. (i) դատարանների գործունեության և օգտվողների կարծիքի մասին հարցումներով (ԳՄՉԳՀ), (ii) դատավորների որակավորման ու վերապատրաստման փորձագիտական գնահատումներով (Ամերիկյան իրավաբանների ընկերակցության ԿԱԵԻՆ-ի Դատական բարեփոխումների ինդեքս), (iii) ծրագրի կողմից ֆինանսավորվող մոնիթորինգի և գնահատման աշխատանքներով (դատարաններից օգտվողների հարցում և ՀԿ-ների կողմից դատարանների մոնիթորինգ):

3. Ծրագրի բաղադրիչներ

Բաղադրիչ 1 – ԴԱՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ [Ծրագրի արժեք= \$4.66 միլիոն]

Սույն բաղադրիչի նպատակն է փոփոխված Սահմանադրության և Դատական Օրենսգրքի շրջանակներում ամրապնդել նոր կամ բարեփոխված հաստատությունների կարողությունները:

Ենթաբաղադրիչ Ա – Արդարադատության Խորհրդի Կարողությունների Ստեղծում
[Ընդհանուր արժեք= \$225,000՝ ՄՁԸ= \$50,000; Հայաստանի համաֆինանսավորում= \$50,000; ԲՄՈՁ=\$130,000]

Փոփոխված Սահմանադրության ներքո ուժեղացվելու է դատական անկախությունը՝ Արդարադատության խորհրդի (ԱԽ) վերակազմավորման միջոցով: ԱԽ-ը բաղկացած է լինելու դատավորների մեծամասնությունից և Ազգային Ժողովի ու ՀՀ Նախագահի կողմից նշանակված երկուական իրավաբան գիտնականներից: ԱԽ-ը պատասխանատու է լինելու դատավորների թեկնածությունների ցանկը կազմելու (հաստատվում է ՀՀ Նախագահի կողմից), ծառայողական առաջխաղացման նպատակով դատավորների գնահատման, դատարանների նախագահների նշանակման և դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: ԱԽ-ը ձևավորվելու է Դատական Օրենսգրքի ընդունմանը հաջորդիվ: ԱԽ-ի աշխատակազմը կենտրոնական Դատական դեպարտամենտի մաս է կազմելու: ԴԲԾ2-ը տեխնիկական օժանդակություն և վերապատրաստում է ապահովելու ԱԽ-ին և դրա աշխատակազմին (տեղակայված է Դատական դեպարտամենտում) հետևյալ նպատակներով՝

- ԱԽ-ի գործունեության համար մշակել գործառնական ընթացակարգեր և պատրաստել կանոններ ու ընթացքներ.
- Դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցանկերը կազմելու համար մշակել ու կիրառել թափանցիկ ընթացակարգեր.
- Մշակել դատավորների գնահատման ստանդարտ չափանիշեր և ընթացքներ.
- Ներդնել թափանցիկ կանոններ և ընթացակարգեր, որոնք ապահովում են դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պատշաճ գործընթաց:

ԱԽ-ի և դրա աշխատակազմի գործունեության համար անհրաժեշտ ապրանքներն ու կահավորումը կտրամադրվի որպես Դատական դեպարտամենտին ԴԲԾ2-ի օժանդակության մաս՝ ստորև նկարագրված Բաղադրիչ 2-ի շրջանակում, իսկ ՏՏ

սարքավորումներն ու ծրագրային ապահովումը՝ ստորև նկարագրված Ենթաբաղադրիչ 1Գ-ի շրջանակում:

Ենթաբաղադրիչ Բ – Արդյունավետ Դատական Դեպարտամենտի Ստեղծում

[Ընդհանուր արժեք= \$940,000՝ ՄՁԸ= \$280,000; Հայաստանի համաֆինանսավորում= \$210,000; ԲՄՌԶ=\$450,000]

2006 թ. հուլիսի 7-ին ընդունվեց Դատական ծառայության մասին օրենքը՝ հավաքելով Հայաստանի դատարանների աշխատակազմերի բոլոր աշխատակիցներին պաշտոնական «դատական ծառայությանե կազմում, որը համապատասխանում է գործադիր իշխանության քաղաքացիական ծառայությանը: Դատական ծառայությունը ղեկավարում է կենտրոնացված դատական կառավարչական աշխատակազմը, որը ձևավորում է Երևանում տեղակայված Դատական դեպարտամենտ: Դատական ծառայության մասին օրենքն ընդունվել է Դատական Օրենսգրքի ընդունումից առաջ, որպեսզի Դեպարտամենտի արագ ստեղծման և լրացուցիչ աշխատակազմ հավաքագրելու միջոցով լրացվի դատարանների համակարգի կառավարման բացը: Դատարանների առկա և նոր աշխատակազմը, ինչպես նաև դատավորները, դատավորների վերապատրաստման կենտրոնում նախնական վերապատրաստում և ուղղություն էին ստանում Դատական ծառայության մասին օրենքի վերաբերյալ: Դատական դեպարտամենտը տեղակայվելու է ԴԲԾ2-ի միջոցներով ֆինանսավորված նոր շենքում, որը լինելու է նաև Վճռաբեկ դատարանի նոր շենքը (տես ստորև Բաղադրիչ 2-ը): Դատական դեպարտամենտը վարչական աջակցություն է տրամադրում դատաիրավական համակարգի կառավարման բոլոր մարմիններին, ներառյալ՝ Արդարադատության խորհուրդը, Դատավորների ընդհանուր խորհուրդը, Դատարանների նախագահների խորհուրդը և Վճռաբեկ դատարանի նախագահին: Թեպետ դատարաններում տեղակայված դատարանների աշխատակազմը շարունակելու է կատարել իր պարտականություններն ու աշխատանքը, այժմ այն հաշվետու է լինելու կենտրոնական Դատական դեպարտամենտին:

Որպես նոր հաստատություն, որն ունի նոր աշխատակազմ և պարտականությունների լայն շրջանակ, Դատական դեպարտամենտը կարիք կունենա հնարավորինս հրատապ կարողություններ ստեղծել: Հետևաբար, այս ենթաբաղադրիչի շրջանակում ԴԲԾ2-ը **խորհրդատվական ծառայություններ և վերապատրաստում** կտրամադրի Դատական դեպարտամենտին՝ հետևյալ պարտականությունների իրականացումը հնարավոր դարձնելու համար.

- Բյուջե, ֆինանսական կառավարում և աուդիտ.
- Վիճակագրական տվյալների հավաքագրում ու վերլուծություն և կատարողականի չափորոշիչների մշակում.
- Մարդկային ռեսուրսների կառավարում.
- Դատական համակարգի շինությունների և ենթակառուցվածքի կառավարում.

- SS համակարգերի պահպանում և ռազմավարական օգտագործում.
- Վճռաբեկ դատարանի նախագահի և Դատական դեպարտամենտի ղեկավարի հետ համաձայնեցրած վարչական այլ ընդհանուր խնդիրներ:

ԴԲԾ2-ի ֆինանսավորումը կաջակցի նաև նոր **դատական անվտանգության ծառայության** ստեղծմանը՝ տեխնիկական օժանդակության և խորհրդատվական ծառայությունների միջոցով, որոնք կուղղվեն ծառայության կազմակերպմանը և դրա անվտանգ ու արդյունավետ գործունեության համար ընթացակարգերի և չափանիշերի մշակմանն օժանդակելու գործին: Վերապատրաստում կտրամադրվի նաև դատական ծառայության աշխատակիցներին: ԴԲԾ2-ի միջոցներից դատական անվտանգության ծառայության համար ապրանքներ չեն տրամադրվի, բացառությամբ կահույքի (որը տրամադրվելու է որպես Բաղադրիչ 2-ի մաս) և SS սարքավորումների ու համակարգերի (տրամադրվելու է Բաղադրիչ 1Գ-ի շրջանակում): Ի հավելումն, այս ենթաբաղադրիչի շրջանակում ԴԲԾ2-ի միջոցներից կֆինանսավորվի Հայաստանի **դատական արխիվի** քաղաքականության և ընթացակարգերի ուսումնասիրություն, կմշակվի արխիվային գործընթացի արդիականացման առաջարկությունների ցանկ և ձեռք կբերվի Դատական դեպարտամենտի հետ համաձայնեցված սարքավորումներ ու համակարգչային ծրագիր՝ կարիքների գնահատման հիման վրա: ԴԲԾ2-ի միջոցները **չեն** օգտագործվի արխիվի համար շենք վերանորոգելու նպատակով:

Ենթաբաղադրիչ Գ – Դատարանների Ավտոմատացման Ընդլայնում և Դատական Տվյալների Բազայի Մշակում

[Ընդհանուր արժեք= \$3.5 միլիոն՝ ՄՁԼ= \$2.3 միլիոն; Հայաստանի համաֆինանսավորում= \$770,000; ԲՄՄԶ=\$420,000]

ԴԲԾ1-ի շրջանակում մշակվել և պիլոտային յոթ դատարաններում տեղադրվել է դատական գործերի կառավարման համակարգչային ծրագիր՝ **Դատարանների ավտոմատացման և հմտությունների փոխանցման (ԴԱՀՓ)** համակարգը: ԴԲԾ2-ի ֆինանսավորումը կօգտագործվի **ԴԱՀՓ համակարգը** ԴԲԾ2-ի շրջանակում վերականգնված կամ նոր կառուցված հնարավորինս շատ թվով դատարանների շենքեր **ընդարձակելու** համար, ներառյալ այն դատարանների շենքերը, որոնք վերակառուցվել են դատական բյուջեի միջոցներով (տես ստորև Բաղադրիչ 2-ը):¹ ԴԲԾ2-ի ֆինանսավորումը հնարավորություն կընձեռնի ընդարձակել դատարանի դահլիճում լսումների ավելացած թափանցիկության և դատական արձանագրությունների մեծացած ճշտության օգուտները, որոնք ի հայտ եկան ԴԲԾ1-

Դատաիրավական համակարգի և Արդարադատության նախարարության խնդրանքով որոշ բանակությամբ համակարգիչներ կարող են տեղադրվել վերակառուցման սպասող դատարաններում՝ Դատական դեպարտամենտի հնարավորություն ընձեռնելով լիարժեք օգտագործել ԴԱՀՓ համակարգի օգուտները, մասնավորապես բյուջեի պատրաստության, ֆինանսական կառավարման և մարդկային ռեսուրսների կարիքների համար:

ի շրջանակում **դատարաններում թվային ձայնագրման համակարգեր** ներդնելու միջոցով: Սահմանադրական փոփոխությունների և առաջարկվող Դատական Օրենսգրքի ընդունման պայմաններում Դատական դեպարտամենտը և Սահմանադրական դատարանը **նոր կամ արդիականացված SS համակարգերի և սարքավորումների** կարիք կունենան՝ իրենց նոր և ընդլայնված դերերը կատարելու համար: Այս ենթաբաղադրիչը, մասնավորապես, ֆինանսավորում կտրամադրի.

- Դատարանների նոր կամ վերանորոգված շենքերում ԴԱՀՓ համակարգի աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումներ, այդ թվում՝ աշխատանքային կայաններ², սերվերներ, մոնիտորներ, տպիչներ և տեղական ցանցեր գնելու նպատակով,
- Տեխնիկական օժանդակություն, որն անհրաժեշտ է ԴԱՀՓ համակարգի ընդլայնմանն աջակցելու, ինչպես նաև վերապատրաստում՝ դրա օգտագործման վերաբերյալ դատավորներին ու դատական ծառայողներին ուսուցանելու համար,
- Դատարանի վերանորոգված կամ նոր կառուցված շենքերի համար դատարանի ձայնագրման համակարգեր գնելու նպատակով,
- Դատական դեպարտամենտի արդյունավետ գործունեության համար SS սարքեր և սարքավորումներ տրամադրելու նպատակով,
- Սահմանադրական դատարանի և Արդարադատության նախարարության որոշ ստորաբաժանումների SS համակարգերի արդիականացման և ընդլայնման նպատակով:

Ի հավելումն ԴԲՕ1-ի շրջանակում սկսված դատական համակարգի ավտոմատացման ընդլայնմանը, ԴԲՕ2-ն աջակցություն կտրամադրի նախադեպի կիրառման իրականացմանը, ինչը նախատեսված է Սահմանադրական փոփոխություններով և առաջարկվող Դատական Օրենսգրքով: Նախադեպը՝ վարույթում գտնվող գործի վճիռն որոշելու համար վերադաս դատարանի կողմից ավելի վաղ քննված գործով կայացված վճռի օգնությանը դիմելու իրավական սկզբունք է: Հայաստանում արդյունավետ գործելու համար դատավորները պետք է մուտք ունենան Վերաքննիչ, Վճռաբեկ և Առաջին աստիճանի դատարաններում նախկինում կայացված պաշտոնական որոշումներին՝ **դատական տվյալների բազայի** ստեղծման և դրա մատչելիությունն ապահովող համակարգի միջոցով՝ ձևավորելով **դատական պորտալ**: Դատական դեպարտամենտը սկսել է դատական տվյալների բազայի և պորտալի նախնական մշակման աշխատանքներ (ԴԱՀՓ համակարգից անկախ)՝ սեփական բյուջեի միջոցներով և ՄԱԿ ԶԾ-ի հնարավոր աջակցությամբ: ԴԲՕ2-ը կկառուցի այս սկզբնական աշխատանքի վրա, ֆինանսավորելով.

²Ցանցին միացված համակարգիչներ, որոնք օգտագործում են սերվերի ռեսուրսները (թարգմ.):

- Տեխնիկական օժանդակություն և խորհրդատվական ծառայություններ՝ դատական վճիռների, հրամանների և որոշումների տվյալների բազայի հետագա մշակման ու ներդրման համար,
- Տեխնիկական օժանդակություն՝ դատական տվյալների բազան և պորտալը ԴԱՀՓ համակարգի հետ ինտեգրելու համար, այդ թվում՝ տվյալների բազայի որոշ մասերի հանրային մատչելիության ապահովում,
- Վերապատրաստում՝ դատական տվյալների բազայի և պորտալի օգտագործման ու պահպանման նպատակով:

**Բաղադրիչ 2 – ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ.
ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ ԴԵՊԻ ՄԱՐԶԵՐ ԵՎ ՎՃՌԱԲԵՎ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆՈՐ ՀԱՄԱԼԻՐ**

/Ծրագրի արժեք= \$20.95 միլիոն՝ ՄՁԸ= \$15.89 միլիոն; Հայաստանի համաֆինանսավորում=\$4.61 միլիոն; ՔՄՈՁ=\$450,000; Հայաստանի դատական բյուջե=\$3.9 միլիոն (2007-09)³/

ԴԲԾ1-ը սկսեց Հայաստանի դատարանների ենթակառուցվածքների վերակառուցման, վերանորոգման և արդիականացման գործընթացը: Կենտրոնանալով Հայաստանի խոշորագույն դատարանների վրա՝ Երևանում և մի քանիսը մարզերում, ԴԲԾ1-ը հաջողությամբ ավարտեց 12 շենքերի աշխատանքները, ուր տեղակայված է 14 դատարան:⁴ Մարզերում գտնվող առաջին ատյանի մնացած դատարաններից շատերը գտնվում են վատթար վիճակում, չունեն բավարար տարածք ու անվտանգություն, իսկ երբեմն տարածքը կիսում են ոստիկանության, դատախազության կամ այլ մարմինների հետ: Թեպետ ամենաակնհայտ խնդիրները (կաթող տանիք, անվտանգության համակարգի բացակայություն) հասցեագրելու համար Վճռաբեկ դատարանի շենքում որոշ վերանորոգումներ են կատարվել, ներկայիս շենքը և դրա տեղանքը չեն կարող բավարարել ժամանակակից վճռաբեկ դատարանի և Դատական դեպարտամենտի վարչական նոր աշխատակազմի պահանջները: Հետևաբար, լրացուցիչ ֆինանսավորում է անհրաժեշտ Հայաստանի մնացած դատարանների (հիմնականում մարզերում)⁵ վերականգնումն ավարտելու և Երևանի կենտրոնում Վճռաբեկ դատարանի համալիր կառուցելու համար, որտեղ տեղակայվելու են, թե Վճռաբեկ դատարանը, թե Դատական դեպարտամենտը: Ի

³ Այս ֆինանսավորումը դուրս է ԴԲՏ2-ի ծրագրային ծախսերի շրջանակից և ուղղակիորեն կառավարվելու է Դատական դեպարտամենտի կողմից, սակայն համակարգելով ԴԲՏԻԳ-ի հետ: Երևանում գտնվող դատարանների երկու շենքեր ծառայում են որպես Տնտեսական դատարանի, Զաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի և Զրեական ու Ռազմական գործերով վերաքննիչ դատարանի շենքեր: ԴԲՏ2-ի շրջանակում կվերակառուցվի Երևանում ԴԲՏ1-ի շրջանակից դուրս մնացած Էրեբունու դատարանի շենքը:

հավելումն ԴԲՕ2-ի միջոցների, ՀՀ Կառավարությունը համաձայնել է երեք տարվա ընթացքում (2007-ից 2009թթ.) դատաիրավական համակարգին լրացուցիչ տրամադրել մոտ 3.9 միլիոն ԱՄՆ դոլար⁶՝ առաջին ատյանի մարզային դատարանների 10 շենքերի վերակառուցման համար:

ԴԲՕ2-ի ֆինանսավորած վերակառուցման աշխատանքները դատաիրավական համակարգին հնարավորություն կտան նաև իրականացնել իր կարողությունների ամրապնդման ծրագիրը՝ դատական ծառայությունների հանդեպ արագորեն աճող պահանջարկին արձագանքելու համար: Հայաստանի առաջին ատյանի դատարաններում 1999-ից 2005 թթ. ընկած ժամանակահատվածում 300 տոկոսով աճել է քաղաքացիական գործերի քանակը (37,000-ից հասնելով 104,018-ի), իսկ դատավորների թիվն աճել է միայն 20 տոկոսով: Արդյունքում, դատաիրավական համակարգը և Արդարադատության նախարարությունը համաձայնության են եկել վերանայված «դատական քարտեզի» շուրջ, որը հիմնված է գործերի բեռնվածության, դատավորների թվի և երկրում գործերի քանակության կանխատեսվող աճի վերլուծության վրա: Դատական նոր քարտեզն ավելացնում է դատավորների թիվը, մեծացնում առաջին ատյանի բոլոր դատարանների չափը և ստեղծում մի շարք մասնագիտացված դատական պաշտոններ, որոնք տեղաբաշխված են գործող դատարաններում (մեկը երկրի հյուսիսում, իսկ երեքը՝ հարավում)՝ քրեական ու քաղաքացիական ավելի բարդ գործեր լսելու համար: Այս վերակազմավորումը կիրականացվի առաջարկվող Դատական օրենսգրքի ընդունմանը հաջորդիվ: Վճռաբեկ դատարանի նախագահը և Արդարադատության նախարարը համաձայնել են ԴԲՕ2-ով և դատաիրավական համակարգի բյուջեով ֆինանսավորվելիք փուլային վերակառուցման և նոր շինարարության մի խումբ առաջնահերթությունների վերաբերյալ, որոնք հիմնված են դատարանի շենքի տեղանքի, առկա շենքի վիճակի և ղեկավարման ու իրականացման հեշտության վրա (մանրամասների համար տես Հավելված 4):

Հիմնվելով սահմանված առաջնահերթությունների վրա, ԴԲՕ2-ի միջոցներից այս բաղադրիչի շրջանակում կաջակցվեն.

- Երևանի կենտրոնում նոր շենքի կամ շենքերի շինարարությունը՝ Վճռաբեկ դատարանը և նոր Դատական դեպարտամենտը տեղակայելու համար,
- Առաջնահերթությունների համաձայնեցված ցանկի և ծրագրի ֆինանսական միջոցների մատչելիության հիման վրա առաջին ատյանի մարզային դատարանների շենքերի շինարարությունը կամ վերակառուցումը՝ դատավորների թվի և դատական գործերի ակնկալվող աճը սպասարկելու համար,

2007-ից 2009 թթ. ընկած ժամանակահատվածում վերակառուցման նպատակներով դատական բյուջեն տարեկան ստանալու է 500 միլիոն դրամ՝ ընդամենը 1.5 միլիարդ դրամ:

- Տարածքի պլանավորման և նախագծման չափանիշերի արդիականացումն ու բարելավումը՝ միջազգային լավագույն փորձին համահունչ,
- Տեխնիկական օժանդակությունը՝ շինարարական բոլոր աշխատանքների պլանավորման և վերահսկման համար,
- Կահույքի, սարքավորումների և այլ ապրանքների (բացառությամբ ՏՏ համակարգերի) ձեռքբերումը՝ դատարանների, դատական նիստերի դահլիճների, դատավորների, դատական ծառայողների և հանրային տարածքների համար:

ԴԲԾ1-ի շրջանակում մշակվել էին տարածքի միասնական պլանավորման ու նախագծման չափանիշեր: Այս չափանիշերը կլրամշակվեն ու կթարմացվեն և ԴԲԾ2-ի շրջանակում ուղղություն կտան վերակառուցմանն ու նոր շինարարությանը: Վճռաբեկ դատարանի համալիրի նախագծային աշխատանքների մրցույթը սկսվել է դատախարարական համակարգի բյուջեի միջոցներով: Դատարանների շենքերի վերականգնման բոլոր աշխատանքների հետևողականությունը և տնտեսական արդյունավետությունն երաշխավորելու համար նախագծային աշխատանքների տեխնիկական առաջադրանքի մշակումը և ուսումնասիրությունը ղեկավարելու է Արդարադատության նախարարության Դատախարարական բարեփոխումների ծրագրի իրականացման գրասենյակը (ԴԲԾԻԳ)՝ թե ԴԲԾ2-ի, թե դատախարարական համակարգի կողմից ֆինանսավորվող շինությունների դեպքում: ԴԲԾ2-ի ծախսային նախահաշիվները կատարվել են ԴԲԾ1-ի փորձի, շինանյութերի ներկայիս գների և դրամ-դոլար փոխանակման արժեքի ՀՀ Կառավարության կանխատեսումների հիման վրա: Հայաստանում շարունակում են աճել վերակառուցման և նոր շինարարության ծախսերը: Որպես արդյունք, ԴԲԾ2-ի շինարարական աշխատանքների ծախսերը հաշվարկվել են զգուշավորությամբ՝ ելնելով այս միտումներից: Նկատի առնելով ՄԶԸ վարկի մատչելի գումարները ծրագիրը կստանան հատուկ հարկազանցությունների համաձայնեցված ցանկի 1-ին և 2-րդ փուլերում ընդգրկված դատարանների բոլոր շենքերի աշխատանքների ավարտումը: **Առաջնահերթությունների համաձայնեցված ցանկի 3-րդ փուլի դատարանների աշխատանքները կսկսվեն անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության պայմանով:** Արդիականացման/վերականգնման աշխատանքների վերջնական շրջանակը հիմնված կլինի Կառավարության և շինարարական ոլորտի իրականացման կարողությունների գնահատման վրա: Վերանորոգված կամ վերակառուցված քառակուսի մետրերի կամ դատարանների շենքերի վերջնական թիվը կարող է ակնկալվածից քիչ լինել, եթե տեղի ունենա շինարարական ծախսերի չնախատեսված աճ կամ փոխանակման արժեքի բացասական շարժեր:

Բաղադրիչ 3 – ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴՊՐՈՑ [Ծրագրի արժեք= \$3.12 միլիոն]

Առաջարկվող Դատական օրենսգրքի շրջանակում Դատավորների վերապատրաստման գործող կենտրոնը դառնալու է Դատավորների վերապատրաստման պաշտոնական դպրոց (ԴՎԴ), որը պարտադիր վերապատրաստում է տրամադրելու դատավորների թեկնածուներին (ընդունելության քննությանը հաջորդիվ) և շարունակական կրթություն՝ դատավորներին և դատական ծառայողներին: Դատավորների մշտական դպրոցի զարգացումը դիմագրավել է մի շարք խոչընդոտների: Դպրոց հիմնադրելու ԵՄ-ի նախնական ֆինանսավորումը դադարեցվել է, իսկ ՀՀ Կառավարության ու դատական բյուջեների ֆինանսավորումը սահմանափակ ու անբավարար է եղել մշտական ուսումնական ծրագրեր և դասախոսական կազմ ձևավորելու համար: ԴԲԾ1-ի օժանդակությունը (որը սահմանափակված էր 0.5 միլիոն ԱՄՆ դոլարով) սկզբում ծրագրված էր ԵՄ-ի ակնկալվող ֆինանսավորումը լրացնելու համար և այն օգտագործվել է ԴԲԾ-ի իրավական շրջանակի ձևավորումն ու նոր դպրոցի գործադրման գործողությունների մանրամասն ծրագրի մշակումը ֆինանսավորելու նպատակով: ԴԲԾ1-ը նաև համակարգչային դասարան ունեցող վերապատրաստման ժամանակավոր կենտրոն է ստեղծել դատարաններից մեկի վերջերս վերանորոգված շենքում: ԴԲԾ2-ի միջոցները կօգտագործվեն այս նախաձեռնություններն ընդլայնելու համար՝ աջակցելով ԴՎԴ-ի մշտական շենքի խնդրի լուծմանը և համագործակցելով ԵՄ-ի ծրագրված օժանդակության հետ, որը տրամադրվելու է դատախազական համակարգի վերապատրաստման բոլոր կարիքները բավարարող վերապատրաստման ուսումնական ծրագրեր մշակելու նպատակով:

Ենթաբաղադրիչ Ա – Դատավորների Վերապատրաստման Դպրոցի Մշտական Շենք

[Ընդհանուր արժեք= \$2.78 միլիոն՝ ՄՁԼ= \$2.05 միլիոն; Հայաստանի համաֆինանսավորում= \$610,000; ԲՄՌԶ=\$110,000]

Վճռաբեկ դատարանի նախագահը ներկայացրել է Կրթության նախարարության համակարգին պատկանող տեխնիկական ուսումնարանի կողմից նախկինում օգտագործված մի շենք, որը կարելի է վերանորոգել ԴՎԴ-ը տեղակայելու համար: Շենքի սեփականությունը փոխանցվել է դատախազական համակարգին: Շենքը բավականաչափ տարածք ունի թե՛ ԴԲԴ-ը, թե՛ Արդարադատության նախարարության աշխատակազմի, այդ թվում՝ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցների (ծառայությունը ԴԲԾ2-ի շահառուներից է՝ տես ստորև Բաղադրիչ 4) վերապատրաստման կենտրոնը տեղակայելու համար: Այս ենթաբաղադրիչի շրջանակում ԴԲԾ2-ը կաջակցի՝

- ԴՎԴ-ը և ԱՆ վերապատրաստման կենտրոնը տեղակայելու համար շենքի վերանորոգմանը և վերակառուցմանը,
- Նոր շենքի վերանորոգման ու վերակառուցման նախագծմանը և դրանց վերահսկողությանը,

- Դպրոցի գործունեության համար անհրաժեշտ կահույքի, ՏՏ սարքավորումների և այլ սարքերի ձեռքբերմանը:

Ենթաբաղադրիչ Բ – Վերապատրաստման Ուսումնական Ծրագրերի Մշակում

[Ընդհանուր արժեք= \$340,000՝ ՄՁԸ= \$30,000; Հայաստանի համաֆինանսավորում= \$80,000; ԲՄՌԶ= \$240,000]

Եվրոպական հանձնաժողովը հաստատել է ԴՎԴ-ի վերապատրաստման ընդհանուր ուսումնական ծրագրի, բիզնես ծրագրի և ԴՎԴ-ի դասախոսների պատրաստման ծրագրի մշակումը ֆինանսավորելու առաջարկ: Ուսումնական ծրագրերի նախնական մշակումը ֆինանսավորվելու ԴԲԾ2-ի Ծրագրի նախապատրաստության կանխավճարի (ԾՆԿ) միջոցներով և սերտորեն համակարգվելու է ԵՄ օժանդակության հետ, երբ վերջինս ուժի մեջ մտնի: ԴԲԾ2-ի միջոցները, համակարգելով ԵՄ ծրագրի հետ, օժանդակություն կտրամադրեն դատավորների համար վերապատրաստման հատուկ դասընթացների և նյութերի մշակմանը: Դատական դեպարտամենտին ԴԲԾ2-ի օժանդակության արդյունքներից ելնելով ԴԲԾ2-ի ֆինանսավորումը կարող է նաև օգտագործվել դատական ծառայողների վերապատրաստման առանձնահատուկ դասընթացների մշակման և իրականացման համար: Ավելի կոնկրետ, այս ենթաբաղադրիչի շրջանակում ԴԲԾ2-ի միջոցները խորհրդատվական ծառայություններ կապահովեն հետևյալ խնդիրներին աջակցելու նպատակով՝

- գործերով վճիռներ կայացնելու և դատական եզրակացություններ կազմելու ընթացքում նախադեպի սկզբունքի կիրառման վերաբերյալ դատավորների համար վերապատրաստման դասընթացների և նյութերի մշակմանը,
- ՏՏ դատական համակարգերի օգտագործման և վարչական հարցերի (օրինակ՝ ֆինանսական կառավարում, դատաիրավական համակարգի բյուջետավորում և այլն) վերաբերյալ դատավորների ու դատարանների աշխատակազմի համար վերապատրաստման դասընթացների և նյութերի մշակմանը:

Բաղադրիչ 4 – ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

[Ծրագրի արժեք= \$1.1 միլիոն՝ ՄՁԸ= \$460,000; Հայաստանի համաֆինանսավորում= \$240,000; ԲՄՌԶ= \$400,000]

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը (ԴԱՀԿ) ԱՆ ստորաբաժանում է, որը պատասխանատու է դատական վերջնական որոշումների հարկադրման համար: ԴԲԾ1-ի շրջանակում ԴԱՀԿ ծառայությանն է տրամադրվել ԴԱՀԿ-ի երեք գրասենյակներում Դատական ակտերի հարկադիր կատարման ավտոմատացված կառավարման համակարգ (ԴԱՀԿ ԱԿՀ) ներդնելու և փորձարկելու

համար անհրաժեշտ խորհրդատվական ծառայություն, տեխնիկական օժանդակություն և ապրանքներ: ԴԱՀԿ ծառայության աշխատակազմը և ղեկավարությունը ստացել են նաև վերապատրաստում և մասնակցել ուսումնական այցերի՝ հարկադիր կատարման այլ մարմիններում ՏՏ լուծումների ինտեգրմանը ծանոթանալու համար: ԴԲԾ1-ի ընթացքում ԴԱՀԿ-ի ծառայության գործառնություններն որոշակի բարելավում են արձանագրել: Համաշխարհային բանկի-ՎՋԵԲ-ի Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հարցմանը մասնակցած հայաստանյան ընկերությունների միջավայրում 2002-ից 2005թթ. ընկած ժամանակահատվածում մեծացել է նրանց թիվը, ովքեր համարում են, որ Հայաստանի դատարաններն ի վիճակի են հարկադրել դատական ակտերը՝ 34 տոկոսից հասնելով 42 տոկոսի: Թեպետ Ծառայության սեփական վիճակագրությունը ներկայացնում է 1999-ից 2004թթ. ժամանակահատվածում սպասարկված գործերի և լիովին ավարտված գործերի քանակության կայուն աճ, այն ցույց է տալիս նաև այդ ցուցանիշերի անկում 2005թ. և չսպասարկված գործերի կուտակման աճ: Որպես արդյունք, ԴԲԾ2-ի միջոցները կօգտագործվեն ԴԲԾ1-ի նախնական հաջողությունը զարգացնելու նպատակով՝ ԱՆ-ի ԴԱՀԿ ծառայության **արդյունավետության բարելավումը շարունակելու** համար: Այս բաղադրիչի շրջանակում ԴԲԾ2-ն ապրանքներ, խորհրդատվական ծառայություններ և վերապատրաստում կտրամադրի հետևյալ խնդիրներին աջակցելու համար.

- ԴԱՀԿ ԱԿՀ համակարգչային ծրագրի լիարժեք ընդարձակման համար ՏՏ համակարգերի ձեռքբերմանը,
- ԴԱՀԿ ԱԿՀ բարելավման համար համակարգչային ծրագրի հզորացմանը՝ ելնելով պիլոտային ծրագրի արդյունքներից և էլեկտրոնային աճուրդների գործող համակարգի հետ ինտեգրելու կարիքներից,
- ՏՏ կառավարման օժանդակությանը՝ ՏՏ բաժնին, որը ընդարձակման ընթացքում պատասխանատու է լինելու ԴԱՀԿ ԱԿՀ պահպանման ու սպասարկման համար,
- ԴԱՀԿ ԱԿՀ-ի ու այլ խնդիրների վերաբերյալ ԴԱՀԿ աշխատակազմի վերապատրաստմանը և ուսումնական նյութերի մշակմանը:

Ի հավելումն, Արդարադատության նախարարը խնդրել է, որ ԴԲԾ2-ն աջակցի **տեխնիկատնտեսական ուսումնասիրությանը**՝ Հայաստանում մասնավոր հարկադիր կատարողների ներկայացման հնարավորությունը հետազոտելու համար: Նման մասնավոր հարկադիր կատարողներ սկսել են գործել Արևմտյան ու Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրներում (օրինակ՝ Նիդերլանդներում և ՆՀՀ Մակեդոնիայում): Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը կվերհանի մասնավոր հարկադիր կատարողների համակարգ ներդնելու գործում ներգրավված խնդիրները, կգնահատի Հայաստանում նման համակարգի անհրաժեշտությունը և առաջարկություններ կներկայացնի Հայաստանում մասնավոր հարկադիր կատարողների համակարգի

փորձարկման ուղղությամբ: Ուսումնասիրության արդյունքներից և ՀՀ Կառավարության ու դատաիրավական համակարգի կողմից ուսումնասիրության վերլուծությունից կախյալ, ԴԲԾ2-ի միջոցները կարող են օգտագործվել նաև մասնավոր հարկադիր կատարողերի համար ընտրված դեպքերում և/կամ Հայաստանի ընտրված մասերում պիլոտային սահմանափակ ծրագիր մշակելու նպատակով:

Բաղադրիչ 5 – ԱՐԲԻՏՐԱԺԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ

[Ծրագրի արժեք= \$430,000՝ ՄՁԸ= \$40,000; Հայաստանի համաֆինանսավորում= \$90,000; ԲՄՈԶ= \$300,000]

Հայաստանը չունի արբիտրաժի և միջնորդության գործող ու արդյունավետ համակարգ: Գործող օրենսդրության շրջանակում գործում են անհատ կազմակերպությունների (օրինակ՝ Երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի) կողմից աջակցվող փոքր թվով «միջնորդ դատարաններե (որոնք փաստացի տրամադրում են արբիտրաժի ծառայություններ): Այդուհանդերձ, առևտրային ձեռնարկությունները և անհատները չունեն վեճերի լուծման համար դատական համակարգի արդյունավետ պաշտոնական այլընտրանք: Արբիտրաժի մասին նոր օրենքը վերջերս է ընդունվել, իսկ ԱՄՆ ՄՁԳ առևտրային օրենսդրության բարեփոխման ծրագիրն որոշ օժանդակություն է տրամադրում տեղական միջնորդ դատավորների (արբիտրների) վերապատրաստման համար: Սակայն ՀՀ Կառավարությունը համոզված է, որ միջազգային ճանաչում ունեցող արբիտրաժի համակարգ ստեղծելու համար պահանջվում են միջազգային կարգավիճակ ունեցող միջնորդ դատավորներ (արբիտրներ):

Ընթացքի մեջ գտնվող այս աշխատանքների հետ համակարգվելով, ԴԲԾ2-ի ֆինանսավորումը տեխնիկական օժանդակություն կտրամադրի հետևյալ խնդիրներին աջակցելու նպատակով՝

- նախագծման օժանդակություն արբիտրաժին աջակցող իրավական և կարգավորման շրջանակի մշակման համար՝ հիմնվելով նոր և գործող օրենսդրության վրա,
- մրցակցային հիմունքներով ընտրված թեկնածուների արբիտրաժի գծով արտասահմանում վերապատրաստմանը և միջազգային հավատարմագրմանը՝ Հայաստանում արբիտրաժի ծառայություններ մատուցելու և վերապատրաստում կազմակերպելու համաձայնության պայմանով:

**Բաղադրիչ 6 – ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ
ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՈՒՄ [Ծրագրի արժեք= \$1.23 միլիոն]**

Այս բաղադրիչը կընդարձակի և կընդլայնի իրավական տեղեկատվության մատչելիությունը՝ ԴԲԾ1-ի շրջանակում մշակված Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգի (ՀԻՏՀ) միջոցով: Ծրագիրը կշարունակի նաև կառուցել ԴԲԾ1-ի կողմից ֆինանսավորված «Իմ իրավունքը» հեռուստածրագրի միջոցով օրինական իրավունքների և դատաիրավական համակարգի դերի մասին հանրային իրազեկման բարձրացման հաջողության վրա: Ի հավելումն, ԴԲԾ2-ի չափորոշիչների ու արդյունքների, ինչպես նաև Հայաստանի դատաիրավական բարեփոխումների ընդհանուր ծրագրի իրականացման մոնիտորինգի ու գնահատման գործընթացին ԴԲԾ2-ն ավելի ուղղակիորեն կներգրավի ՀԿ-ներին և քաղաքացիական հասարակությանը:

Ենթաբաղադրիչ Ա – ՀԻՏՀ-ի Ընդլայնում և Հզորացում

[Ընդհանուր արժեք= \$410,000՝ ՄԶԸ= \$260,000; Հայաստանի համաֆինանսավորում= \$90,000; ԲՄՌԶ= \$60,000]

ՀԻՏՀ-ի միջոցով հայաստանաբնակներին ինտերնային կապով անվճար մատչելի է Հայաստանի օրենսդրությունը և Կառավարության որոշումները: Պետական սեփականություն հանդիսացող Պաշտոնական տեղեկագիր ընկերությունը կառավարում և թարմացնում է ՀԻՏՀ-ը, որը մատչելի է նաև լազերային կոմպակտ սկավառակների վրա՝ բաժանորդագրության փոքր վճարով: Տվյալների բազան ներկայիս պարունակում է 1994 մինչև 2006թթ. օրենքները և արագորեն ընդլայնում է իր ծածկույթն (մինչև 1948թ.) ու օգտագործումը (2006թ. հունվարից մինչև նոյեմբեր 76 տոկոսով աճել է ինտերնետային էջ այցերի քանակը): Նյութերի աճող ծավալը տվյալների բազա արագ ու արդյունավետ մուտքագրելու և տվյալների բազայի հանրային մատչելիությունն ընդլայնելու հարցերում Պետական տեղեկագրին օգնելու նպատակով անհրաժեշտ է լրացուցիչ օժանդակություն: Հետևաբար այս ենթաբաղադրիչի շրջանակում ԴԲԾ2-ը կաջակցի ՀԻՏՀ-ի ընդլայնմանը՝ հետևյալ գործողությունների միջոցով.

- ՀԻՏՀ հզորացում՝ ելնելով Պետական տեղեկագրում ներկայիս ֆունկցիոնալ հնարավորությունների և տվյալների մշակման ուսումնասիրությունից,
- ՏՏ լրացուցիչ սարքավորումներ ձեռքբերում, որն անհրաժեշտ է ՀԻՏՀ-ի ընդլայնվող բովանդակությունը և ավելացող օգտագործումը տեխնիկապես ապահովելու համար,
- Դատարաններում, հանրության կողմից բարձր հաճախելիություն ունեցող պետական գործակալություններում (օրինակ՝ մարզպետարաններ,

քաղաքապետարաններ, կադաստր, նոտարական գրասենյակներ և այլն) և տարածքային կամ համայնքային կենտրոններում հանրային մատչելիությունն ապահովող ՀԻՏՀ առանձնացված տերմինալների տեղադրում:

Ենթաբաղադրիչ Բ – Դատաիրավական Համակարգի Տեղեկատվական Օառայությունների Բարելավում

[Ընդհանուր արժեք= \$300,000՝ ՄՁԸ= \$10,000; Հայաստանի համաֆինանսավորում= \$70,000; ԲՄՈՁ= \$230,000]

Բարեփոխումների երկրորդ փուլում Հայաստանի դատաիրավական համակարգի ղեկավարության նպատկներից մեկն է բարելավել հանրությանը մատուցվող դատաիրավական ծառայությունները: Այս բարելավումը, առաջին հերթին, պահանջելու է դատարանների քարտուղարությունների ծառայության բարելավված չափանիշեր ու գործողություններ, քանի որ յուրաքանչյուր դատարանում քարտուղարությունն առաջին տեղն է, ուր անձն այցելում է թղթեր ներկայացնելու, դատական ընթացակարգերի վերաբերյալ տվյալներ ստանալու և ընդհանուր իրավական օգնություն խնդրելու համար: ԴԲԾ1-ով կատարվել և ԴԲԾ2-ի Բաղադրիչ 2-ի շրջանակում կատարվելու են յուրաքանչյուր նոր կամ վերանորոգված դատարանի քարտուղարության գրասենյակի և հանրային տարածքի ֆիզիկական բարելավումներ: Քարտուղարության աշխատակազմի ծառայության ուղղվածությունը բարելավելու համար ԴԲԾ2-ը կտրամադրվի տեխնիկական օժանդակություն: Հայաստանում նախադեպի սկզբունքի ներդրմանը զուգահեռ իրավաբաններին, դատավորներին և հանրությանն անհրաժեշտ են նաև հիմնական օրենքների ու դատական որոշումների պաշտոնական նկարագրություններ և մեկնություններ: Դրանից ելնելով, այս ենթաբաղադրիչի շրջանակում ԴԲԾ2-ը կաջակցի՝

- Քարտուղարության աշխատակազմի վերապատրաստմանը՝ ծառայության չափանիշերը բարելավելու և իրավական ընդհանուր գիտելիքները խորացնելու համար,
- Որոշակի իրավական խնդիրների (գենդերային իրավունքներ, քրեական իրավունք) վերաբերյալ հանրային իրազեկման թերթիկների ու գրքույկների պատրաստմանը և դատարաններում իրավական տեղեկատվության մատչելիության ընդլայնմանը,
- Դատավորների ու Դատական դեպարտամենտի և լրատվամիջոցների միջև հարաբերությունների ամրապնդմանը և կապի բարելավմանը,
- Հայաստանի առանցքային օրենքների, դատական որոշումների և իրավական այլ կարևոր խնդիրների վերաբերյալ փորձագիտական մեկնաբանության մշակմանը, որը կօգտագործվի դատավորների, իրավաբանների և հանրության կողմից:

Ենթաբաղադրիչ Գ – Հանրային Իրազեկում և Դատախրավական Բարեփոխումների Մոնիտորինգ

[Ընդհանուր արժեք= \$520,000՝ ՄԶԸ= \$200,000; Հայաստանի համաֆինանսավորում= \$110,000; ԲՄՌԶ= \$210,000]

ԴԲԾ1-ի միջոցներով նախագծված ու թողարկված թիվ մեկ վարկանիշն ունեցող «Իմ իրավունքը» հեռուստաշոուն հաջողությամբ ընդլայնեց հանրային իրազեկությունը դատարանի գործառույթների և Հայաստանի օրենսդրության շրջանակում որոշակի օրինական իրավունքների հարկադրման մասին: Հայաստանի Հանրային հեռուստաընկերությունը սահմանափակ թվով լրացուցիչ հաղորդումներ է թողարկել երրորդ հեռուստաշրջանի համար: Սակայն հաղորդման ստեղծած հետաքրքրությունը մնում է (առաջին երկու հեռուստաշրջանների ընթացկում փոստով, հեռախոսագանգերով և էլեկտրոնային փոստով ներկայացվել են տեղեկատվություն տրամադրելու ավելի քան 3000 խնդրանքներ): Ի պատասխան, ԴԲԾ2-ի օժանդակությունը կօգտագործվի դատախրավական բարեփոխումների առաջընթացի ու ազդեցության և օրինական իրավունքների հարկադրման իրական օրինակների մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակով **հեռուստատեսության օգտագործումն ընդարձակելու և ընդլայնելու համար:** Մասնավորապես, հետագա թողարկումները կարող են դուրս գալ «Իմ իրավունքի» քաղաքացիական գործերի օրինակների շրջանակից և ընդգրկել ընտանեկան, գենդերային իրավունքներ ու քրեական օրենսդրության խնդիրներ:

Դատախրավական համակարգը և ԱՆ-ի աշխատակազմը կարող են նաև ակտիվ լինել տեղեկատվության, կատարողականի գնահատումների և դատական վիճակագրության տարածման հարցում՝ ընթացող օրենսդրական և դատախրավական բարեփոխումները բացատրելու և խրախուսելու համար: ԴԲԾ2-ը կաջակցի այս ջանքերին, ֆինանսավորելով **պարբերական մամուլ ասուլիսները և դոնորների բրիֆինգները, տեղակատվական քարոզարշավները և նպատակային վերապատրաստման սեմինարները** (իրավաբանների և իրավաբան ուսանողների համար), որոնք նախատեսված են Հայաստանի դատախրավական համակարգի և դատարանների կատարողականում տեղ գտած բարեփոխումների ու բարելավումների մասին հանրային իրազեկումը բարձրացնելու և բարեփոխումների իրականացումը բարելավելու համար:

ԴԲԾ1-ի ընթացքում սովորած կարևոր դասերից է դատախրավական համակարգի հետագա բարեփոխումների համար մոնիտորինգի և գնահատման ավելի լավ մեթոդաբանություններ մշակելու անհրաժեշտությունը (քննարկված է ստորև): **ՀԿ-ների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավումը ԴԲԾ2-ի իրականացման և մոնիտորինգի աշխատանքներին** ծառայելու է երկու նպատակի: Նախ դա ընդլայնելու է հասարակության այն խմբերի շրջանակը, որը տեղեկացված է և շահագրգռված ԴԲԾ2-ի կողմից աջակցվող բարեփոխումների

արդյունավետ իրականացմամբ: Երկրորդ՝ դա ապահովելու է ԴԲԾ2-ի դատաիրավական համակարգի և ԱՆ-ի շահառուների կողմից կատարած իրականացման միջոցառումների արտաքին «ստուգումե կամ ուսումնասիրություն: Այս ենթաբաղադրիչի շրջանակում ԴԲԾ2-ը, մասնավորապես, աջակցելու է՝

- Հանրության և դատարանների ծառայություններից օգտվողների լայն, պարբերական հարցումներ՝ դատաիրավական բարեփոխումների աշխատանքների մասին ընկալումները և ԴԲԾ2-ի իրականացումը մոնիտորինգի ենթարկելու համար,
- Դատարանների մոնիտորինգի միջոցառումներ Երևանի պետական համալսարանի Իրավաբանության ֆակուլտետի, Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի և նմանօրինակ այլ կազմակերպությունների կողմից՝ դատական ծառայությունների վրա ավտոմատացման, վերապատրաստման և տեխնիկական օժանդակության ազդեցությունը գնահատելու, ինչպես նաև դատավորների կատարողականի և դատարանների արդյունավետության մոնիտորինգի համար:

4. Քաղաձ դասերը և դրանց արտացոլումը ծրագրի նախագծում

Այս ծրագրի նախագծման մեջ հաշվի են առնվել հետևյալ դասերը՝

Դատական իշխանության մեծացած անկախությունը հաշվետվողականության հետ փոխկապակցելու անհրաժեշտությունը: Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի իրավական և դատական բարեփոխումների դասերի վերլուծությունը ցույց է տալիս, որ անկախությունն ու հաշվետվողականությունը պետք է ձեռք ձեռքի ընթանան՝ դատաիրավական համակարգի ազնվությունն ու որակը երաշխավորելու համար:⁷ Բիզնեսները, մասնավորապես, ցանկանում են ունենալ դատարաններ, որոնք անաչառ ու արդար են, բավականաչափ ուժեղ են իրենց որոշումները հարկադրելու համար, արագ ու մատչելի են: Այդուհանդերձ, բարեփոխումները, որոնք Հայաստանում կարող են ուժեղացնել մեկ հարթությունը (օրինակ՝ բացառապես դատավորներից կազմված Արդարադատության խորհուրդ), կարող են նաև թուլացնել, թեպետ կարճաժամկետ կտրվածքով, մեկ այլ հարթություն, օրինակ՝ դատական համակարգի հաշվետվողականությունը: Հայաստանի նման երկրներում, որտեղ հանրությունը ցածր կարծիք ունի դատաիրավական համակարգի և դրա գործունեության մասին, դատաիրավական համակարգի հաշվետվողականության շեշտադրումը դատական իշխանության անկախության ավելացումը հավասարակշռելու անհրաժեշտ մեխանիզմ է: ԴԲԾ2-ն ընդգրկում է միջաջառումներ, որոնք նպատակադրում են դատաիրավական համակարգի հաշվետվողականության բարելավումը, այդ թվում՝ (i) դատարանների շենքերի

⁷ *Judicial Systems in Transition Economies: Assessing the Past, Looking to the Future* World Bank (2005).

վերանորոգումը՝ դատական ծառայությունների ու արձանագրությունների հանրային մատչելիությունը բարելավելու և դատավորների ու դատարանների աշխատակազմի վրա ազդեցություն գործելու հնարավորությունները նվազեցնելու համար, (ii) դատական նիստերի դահլիճների թափանցիկության ավելացումը՝ ընդարձակելով թվային ձայնագրման համակարգերի կիրառումը դատական նիստերի դահլիճներում, (iii) ԱԽ-ի հետ աշխատանքը դատավորների և դատարանների աշխատակազմի կատարողականի գնահատման համապարփակ մեխանիզմներ մշակելու ուղղությամբ, (iv) դատավորների վարքի էթիկական ու մասնագիտական չափանիշերը հարկադրելու կարողության ամրապնդումը, (v) ՏՏ գործիքի տարածումը և դատական համակարգի կատարողականի համար վերահսկելի չափորոշիչներ մշակելու օժանդակությունը:

Դատարանների շենքերի վերականգնման գործում պահպանել Ծրագրի միջոցների տնտեսապես արդյունավետ օգտագործումը: Դատաիրավական բարեփոխումների առաջին ծրագիրը մեծ թվով խնդիրներ և ուշացումներ ունեցավ, որոնք առնչվում էին դատարանների շենքերի վերականգնման բաղադրիչին: Վերականգնման ծախսերի սկզբնական նախահաշիվներն անիրատեսորեն ցածր էին դատարանների գրեթե բոլոր շենքերի դեպքում, չնայած այն հանգամանքին, որ ԴԲՕ1-ն ուներ Հայաստանի պետական հատվածում շինարարական աշխատանքների մեկ մետրի դիմաց ամենացածր արժեքները: Երեք դեպքերում ապացուցվեց, որ շենքերի վերականգնումն անհնար է և պահանջվում է ավելի ծախսատար նոր շինարարություն, ինչը հետաձգեց իրականացումը: Չնախատեսված արտաքին գործոնները, այդ թվում՝ շինարարության ծախսերի զգալի աճը և հայկական դրամի կտրուկ արժևորումն ԱՄՆ դոլարի համեմատ, նպաստեցին նրան, որ ԴԲՕ1-ի շրջանակում անհնար եղավ վերականգնել դատարանների այն քանակությամբ շենքեր, որքան նախապես ծրագրված էր: Այս խնդիրները հասցեագրելու նպատակով շինարարական աշխատանքների գծով ԴԲՕԻԳ-ի փորձառու աշխատակազմն իրականացրեց ԴԲՕ2-ի շրջանակում վերակառուցվելիք կամ վերականգնվելիք դատարանների առկա շենքերի լայնածավալ ուսումնասիրություններ ու գնահատումներ և սերտորեն վերահսկելու է դատարանի յուրաքանչյուր շենքի նախագծային աշխատանքները: Ծրագրի նախապատրաստության կանխավճարի (ՇՆԿ) ֆինանսավորումը կօգտագործվի նախագծման ու տարածքի օգտագործման չափանիշերի արդիականացում ու զարգացման համար մասնակցային գործընթաց նախաձեռնելու նպատակով, որպեսզի երաշխավորվի դատական բոլոր շենքերի նախագծերի տնտեսական արդյունավետությունը: Վերականգնման ու կառուցման աշխատանքների վերահսկողության բարձր մակարդակը պահպանելու համար ԴԲՕԻԳ-ը կմեծացնի իր Շինարարական աշխատանքների բաժնի կարողությունը՝ աշխատանքի ընդունելով ճարտարապետ/ճարտարագետ լրացուցիչ մասնագետներ: Ամենակարևորն այն է, որ դատարանների շենքերի առաջնահերթության համաձայնեցված ցանկը կուղղորդի ԴԲՕ2-ի միջոցների օգտագործումը Բաղադրիչ 2-ի շրջանակում, հետևաբար ցածր առաջնահերթություն ունեցող դատարանները չեն

վերականգնվի կամ կառուցվի, եթե արժեքները գերազանցեն ԴԲԾԻԳ-ի հետ մշակված նախահաշիվները: Որոշակի թվով շենքեր վերականգնելու պարտավորություն ստանձնելու փոխարեն, ինչը մեծացնում է տեղական ակնակալիքները ընթացքի հանդեպ, ԴԲԾ2-ը պարտավորվում է տնտեսապես արդյունավետ օգտագործել վարկային և Կառավարության համաֆինանսավորման միջոցները:

Մշակել և ներդնել մոնիտորինգի ու գնահատման (ՄնԳ) ավելի առողջ համակարգ:
ԴԲԾ1-ը վնասներ կրեց ՄնԳ ոչ համարժեք և չօգտագործված շրջանակի հետևանքով: Դատախրավական համակարգից ստացված անբավարար կամ ոչ արժանահավատ վիճակագրության պատճառով ԴԲԾ1-ը չունի բազային համարժեք տվյալներ և ծրագրված միջնաժամկետ ուսումնասիրությունը չկայացավ: Թեպետ ԴԲԾ1-ի վերջում իրականացվեց հանրության և դատարաններից օգտվողների հարցում, օգտագործված մեթոդաբանությունը դժվարացրեց համեմատությունները ծրագրի նախապատրաստության ընթացքում իրականացված հարցման հետ: ԴԲԾ2-ն այնպես է նախագծվել, որ ՄնԳ-ը դրա գործառնության բաղադրիչ մաս է: Դատական դեպարտամենտին տրամադրվող օժանդակությունը՝ ԴԱՀՓ գործերի կառավարման համակարգի օգտագործման հետ համատեղ, կօգտագործվի դատական գործառնությունների ու դատական համակարգի կատարողականի մասին տվյալների հավաքագրումը և վերլուծությունը բարելավելու համար: Կշեշտադրվի դատավորների և դատարանների համար կատարողականի պատշաճ չափորոշիչներ մշակելու խնդիրը: Դատախրավական համակարգում բարեփոխումների զարգացումները և ազդեցությունը մոնիտորինգի ենթարկելու նպատակով, կատարողականի մասին համակարգի ներսում ձևավորվող այս տվյալներից բացի ԴԲԾ2-ը կօգտագործի երրորդ կողմի գործիքներից ստացվող չափորոշիչներ, որոնց թվում են Համաշխարհային Բանկի-ՎՁԵԲ-ի ԳՄՁԳ հարցումների տվյալները, ԱԻԸ ԿԱԵԻՆ-ի Դատական բարեփախման ինդեքսը և Համաշխարհային Բանկի Գործարարության չափորոշիչները: Ծրագրի միջոցներից ուղղակի կֆինանսավորվեն դատարաններից օգտվողների և հանրության հատուկ հարցումներ: Վերջապես, ԴԲԾ2-ի միջոցները կօգտագործվեն դատարանների գործառնությունների վրա ԴԲԾ2-ի միջոցառումների և դատախրավական ընդհանուր բարեփոխումների ազդեցության ուղղակի մոնիտորինգին ՀԿ-ներ և քաղաքացիական հասարակություն ներգրավելու համար:

Ստացվելիք արդյունքների կենսակայունությունը: ՏՏ համակարգերը և վերակառուցված ու նորակառույց շինությունները պահանջում են պահպանման ու սպասարկման համար հատկացված միջոցներ: Իրավական և դատական բարեփոխումների նախկին ծրագրերը, այդ թվում ԴԲԾ1-ը, անհրաժեշտ այս միջոցների հատկացման շուրջ համաձայնության հասնելու համար պահանջել են ծավալուն քննարկումներ և քաղաքական երկխոսություն կառավարության ու դատախրավական համակարգի գործընկերների հետ: ԴԲԾ1-ի շրջանակում Արդարադատության նխարարությունը կարողացավ ընդարձակել Պաշտոնական

տեղեկագրի կարողությունները և աշխատակազմը՝ ՀԻՏՀ-ի ներդրմանն աջակցելու համար, իսկ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը ստեղծեց ՏՏ սպասարկման բաժին՝ ԴԱՀԿ ԱԿՀ-ի ներդրմանն օժանդակելու համար: Դատախիբավական համակարգը համաձայնեց նաև վերհանել դատարաններում ՏՏ աջակցությունը ԴԱՀՓ գործերի կառավարման համակարգի համար և նպատակ ունի դրսի կազմակերպության հանձնել համակարգչային ծրագրի սպասարկումը և այլ ծառայությունները: ԴԲԾ2-ը կշարունակի քաղաքականության շուրջ այս երկխոսությունը դատական իշխանության ղեկավարության, Արդարադատության և Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարությունների հետ: ԴԱՀՓ գործերի կառավարման համակարգի ընդարձակման համար սարքավորումներ գնելու միջոցների բաշխումը պայմանավորված կլինի դատարաններում ԴԱՀՓ-ի իրականացման համար ՏՏ տեխնիկական աջակցության ապահովումից: Ի հավելումն, ենթաբաղադրիչ 1Բ-ի շրջանակում ԴԲԾ2-ի ֆինանսավորումը կօժանդակի Դատական ղեկարարամենտի ստորաբաժանման ՏՏ ապահովման կարողության ստեղծմանը:

5. Դիտարկված այլընտրանքները և դրանք մերժելու պատճառները

Նախապատրաստության ընթացքում նկատի են առնվել ծրագրի նախագծման մի շարք կարևոր այլընտրանքներ:

Առաջին, քննարկվել է **նոր, այլ ոչ թե կրկնվող** ծրագրի տարբերակը, որը տարբերվող շրջանակի, այդ թվում նոր ուղղությունների և գործողությունների, հնարավորություն կընձեռներ: Նոր ծրագիր կպահանջվեր, եթե առաջարկվող գործողությունների կենտրոնացման փոփոխությունը տեղին լիներ: Սակայն համաձայնություն ձեռք բերվեց, որ Հայաստանը դիմագրավում է ընթացիկ ծրագրի շրջանակում սկսված առանցքային բարեփոխումներն ու արդիականացումը հիմնականում ավարտելու անհրաժեշտությանը, օրինակ՝ դատավորների վերապատրաստումը, դատական համակարգի կառավարման ամրապնդումը, գործերի և հարկադիր կատարման կառավարման ժամանակակից համակարգերի ընդարձակումը, դատական ենթակառուցվածքների վերականգնման ամբողջացումը:

Երկրորդ, որպես առաջին ծրագրի շրջանակում գործողությունները շարունակելու տարբերակ, դիտարկվել է **լրացուցիչ ֆինանսավորման** օգտագործումը: Սակայն Բանկի քաղաքականությունը պահանջում է, որ լրացուցիչ գործողություններն ավարտվեն փակման ներկայիս ժամկետին հաջորդող 3 տարվա ընթացքում: Եռամյա ժամկետում իրատեսական չէ ավարտել առաջարկվող գործողությունները, համակարգերի ընդարձակումն ու աշխատանքները: Ի հավելումն, առաջարկվող գործողություններն իրականացնելու համար ընթացիկ ծրագրից **ծրագրային ծախսերի խնայողություններ** չէին գոյացել:

Երրորդ, հաշվի առնելով Հայաստանում շինարարական ծախսերի հետագա

հավանական աճը, դիտարկվեց Բաղադրիչ 2-ի համար **Ֆիզիկական արդյունքի պահպանողական թիրախ** սահմանելու (կամ դատարանների քանակ, կամ վերականգնվող/կառուցվող տարածքի քառակուսի) և **չնախատեսված ծախսերի համար հատկացման** հարցը: Սակայն նկատի առնելով վերականգնման համար հատկացված միջոցները հնարավորինս մեծ ծավալի համար օգտագործելու իշխանությունների հստակ պահանջը և նույնիսկ նմանօրինակ տնտեսական միջավայրում գները զսպելու ԾԻԳ-ի ցուցադրած ունակությունը, որոշում կայացվեց չունենալ չնախատեսված ծախսերի դրամագլուխ, իսկ փոխարենը՝ կազմել դատարանների առաջնահերթության ցանկ:

Չորրորդ, նկատի առնելով Համաշխարհային Բանկի ծրագրերի միտումները, դիտարկվել է **ԾԻԳ-ն ԱՆ-ի կամ նոր Դատական դեպարտամենտի կազմում քաղաքացիական ծառայության առանձնացված ստորաբաժանումով փոխարինելու տարբերակը**: Նախ Կառավարությունը նշեց, որ դժվար կամ նույնիսկ անհնար կլինի պահպանել գործող ԴԲԾԻԳ-ի փորձառու աշխատակազմը, եթե աշխատակիցները վարձատրվեն քաղաքացիական ծառայության կամ դատական ծառայության աշխատավարձերի գործող սանդղակով: Կփոշիանա հիմնական կապիտալը՝ Բանկի ընթացակարգերին տեղյակ փորձառու աշխատակազմը: Երկրորդ, Հայաստանի օրենսդրական շրջանակում կարող են առաջ գալ իրավական հետևանքներ, եթե ԴԲԾԻԳ-ը՝ պետական անկախ հաստատությունը դառնա Դատական դեպարտամենտի մաս կամ գործադիր իշխանության ճյուղային նախարարության փոխարեն հաշվետու լինի Վճռաբեկ դատարանի նախագահին: Որպես ԴԲԾ1-ի շրջանակում սկսված միջոցառումները, հատկապես՝ շինարարական աշխատանքները, զգալիորեն ընդարձակող կրկնվող ծրագիր, որը պահանջելու է Բանկի ընթացակարգերի և Հայաստանի օրենսդրության ու պրակտիկայի մանրամասն գիտելիքներ, ԴԲԾ2-ի միջոցառումներն իրականացնելու ամենաարդյունավետ մեթոդը՝ Կառավարության կարծիքով, կլինի ԾԻԳ-ի ներկայիս կառուցվաքը: